

Պետական և համայնքային բոլոր ծառայությունները պետք է.

- ձեզ սիրալիր ընդունեն
- հարգանքով վարվեն ձեզ հետ
- ձեզ հետ վարվեն այնպես, ինչպես մնացած բոլորի հետ
- տեղյակ լինեն տարբեր մշակույթների մասին
- օգնեն ձեզ հասկանալ ձեր իրավունքները:

Դուք իրավունք ունեք բողոքել ծառայություններ մատուցողից:

NSW-ի Մարդու իրավունքների պաշտպան

Մենք այստեղ ենք, որպեսզի օգնենք NSW-ում ապրող բոլորին:

Մենք ցանկանում ենք, որ բոլորի հետ արդար վարվեն:

Մեր ծառայությունն անվճար է:



Կապվեք մեզ հետ



Զանգահարեք՝ 02 9286 1000

Անվճար զանգեր 1800 451 524

հեռախոսահամարին

Սիդնեյի քաղաքային տարածքի սահմաններից դուրս. կարող են գանձվել վճարներ շարժական հեռախոսից զանգերի համար:



nswombo@ombo.nsw.gov.au



Ազգային փոխանցման ծառայություն՝ 133 677



Թարգմանիչ

Քայլ 1. Զանգահարեք TIS 131 450

Քայլ 2. Խնդրեք խոսել NSW-ի Մարդու իրավունքների պաշտպանի հետ՝ 9286 1000 հեռախոսահամարով



www.ombo.nsw.gov.au

ISBN: 978-1-925885-34-7

Դուք խնդիր ունեք NSW-ի պետական ծառայության կամ համայնքային ծառայության հետ:

Հնարավոր է փորձել եք բողոք ներկայացնել: Բայց դա չի օգնել:



NSW-ի Մարդու իրավունքների պաշտպանը կարող է օգնել:



Մենք կարող ենք օգնել ձեզ.

- նամակ ուղարկել ծառայություններ մատուցողին
- գտնել ճիշտ անձին՝ կապ հաստատելու համար
- արտահայտել այն արդյունքը, որը ցանկանում եք ստանալ ձեր բողոքից:

Մենք հնարավոր է.

- խնդրենք ձեզ ներկայացնել խնդրի վերաբերյալ ձեր ունեցած ցանկացած փաստաթուղթ, օրինակ՝ նամակներ, որոնք դուք գրել եք ծառայություններ մատուցողին կամ նամակներ, որոնք ծառայություններ մատուցողը գրել է ձեզ
- խոսենք ծառայություններ մատուցողի հետ, որի հետ դուք խնդիր ունեք
- խոսենք այլ մարդկանց հետ, ովքեր ձեզ օգնել են:



Կարծում եք՝ ձեր նկատմամբ անարդարացի են վարվել:



Դուք փորձել եք օգնություն ստանալ, բայց չեք կարողացել.

- լուծել խնդիրը
- հավելյալ տեղեկատվություն ստանալ
- տեղեկանալ ձեր իրավունքների մասին:

Անձնակազմը անօգտակար էր, կամ նրանք



- կոպիտ էին և անհարգալից էին ձեր նկատմամբ
- տեղեկատվություն չունեին ձեր լեզվով
- թարգմանիչ չունեին:

Այլ մարդիկ կարող են ունենալ նույն խնդիրը, ինչպես դուք: Մենք աշխատում ենք ծառայություններ մատուցողների հետ՝ բարելավելու ծառայությունները բոլորի համար: